ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ-ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ. ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ»

Ժամանակակից հասարակության կայուն զարգացման առանցքային գործոններից են կրթություն-աշխատաշուկա արդյունավետ համագործակցությունը:

ՀՀ-ում երիտասարդները կանգնած են մի շարք համակարգային խնդիրների առջև՝ կապված մասնագիտական կրթության, աշխատանքի ձեռքբերման, աշխատանքային իրավունքների ապահովման և արժանապատիվ զբաղվածության հետ:

Յուրաքանչյուր ոք ունի կրթություն ստանալու, ինչպես նաև աշխատանքի ազատ ընտրության իրավունքը:[1]Կրթության նպատակներից մեկը՝ անձի մասնագիտական կարողությունների ձևավորում է աշխատաշուկայում՝ իր իսկ դերի գիտակցմամբ:

Ներկայումս՝ առավել քան երբևէ, պետության կայուն զարգացումն ու այդ գործընթացի առջև ծառացած խնդիրների հաղթահարումը պայմանավորված են տվյալ պետության կրթության, աշխատաշուկայի զարգացմամբ և հասարակության կրթվածության մակարդակով:Կրթությունը դիտվում է որպես հասարակության կենսունակության ապահովման հիմնարար բաղադրիչ, իսկ պետության կրթական քաղաքականությունը՝ որպես ազգային անվտանգության ապահովման միասնական պետական քաղաքականության կարևորագույն տարր:

Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելուն ու սերունդներին փոխանցելուն:[2] Բոլոր ժամանակներում կրթությունը կարևոր տեղ ու դեր է ունեցել: Փոխվում են ժամանակները, ավելի է կատարելագործվում կրթության որակը, հետևաբար էլ ավելի է բարձրանում նրա դերը:

Կրթության անհրաժեշտությունը և դրա որակի խնդիրը տարբեր կերպ են ընկալում սովորողները և գործատուները:Ուսում ստացողների կողմից կրթության որակը մեկնաբանվում է որպես համապատասխանություն աշխատաշուկայի պահանջներին,իսկ գործատուներն այն համարում են աշխատանքային պարտականությունների արդյունավետ կատարման երաշխիք:

Հայաստանում երիտասարդությունը՝ հատկապես 20-35 տարիքային խումբը, ավելի մեծ չափով բախվում է գործազրկության խնդրին:Վերջին տարիներին ՀՀ աշխատաշուկայում որոշ դրական զարգացումներ դիտվեցին, բայց ընդհանուր պատկերը այն է, որ երիտասարդները դժվարությամբ են գտնում իրենց կրթությանը և հմտություններին համապատասխան աշխատանք: :Երիտասարդները միշտ համարվել են փոփոխության կրող,

---

1 «ՀՀ Սահմանադրություն»

https://www.arlis.am/hy/acts/102510

2 «Կրթության մասի ՀՀ օրենք»

https://www.arlis.am/hy/acts/68299

ուստի երիտասարդների՝ աշխատաշուկայում ներգրավվածության մակարդակը, էական նշանակություն ունի պետության սոցիալ-տնտեսական զարգացման գործում: 2020 թ.-ի համավարակից, հետպատերազմյա շրջանից հետո Հայաստանում երիտասարդների զբաղվածության շուրջ առկա քննարկումները առավել ակտիվացան: 2022թ. -ից Հայաստանում զբաղվածության ապահովման նոր ծրագիր էր իրականացվել, այն է՝ ռազմական գործողություններին մասնակցած ու զորացրված անձանց աջակցել մասնագիտական հմտություններ ձեռք բերելու և աշխատաշուկայում մրցունակ դառնալուն, բայց հակառակ ջանքերին, ըստ իրականցված ուսումնասիրության նկատվում է կրթություն-աշխատաշուկա կապի ոչ այնքան էլ լավ զարգացումը:

Աշխատատեղերի բացակայությունը, հատկապես փոքր քաղաքներում և գյուղական համայնքներում, երիտասարդներին ստիպում է ծայրահեղ քայլերի գնալ՝ հաճախ ստիպված լինելով տեղափոխվել մեծ քաղաքներ, որտեղ մրցակցությունն ավելի ուժեղ է, իսկ աշխատատեղերը սահմանափակ: Այս իրավիճակը երիտասարդների մոտ ստեղծում է ապագայի նկատմամբ անորոշություն՝ բացասաբար ազդելով երիտասարդների սոցիալական ու հոգեբանական վիճակի վրա:

Ըստ վիճակագրական տվյալների ՀՀ-ում առաջին անգամ աշխատանք փնտրող ազգաբնակչության մեջ գերակշիռ տեղը 16-29 տարեկան երիտասարդներն են ՝ շուրջ 64,72 %:

16-29 տարեկան աշխատանք փնտրող երիտասարդ գործազուրկների ընդհանուր թվաքանակում առաջին տեղում Արարատի մարզն է (15,3%), երկրորդ տեղում կրկին քաղաքամայր Երևանն է (14,2%), երրորդ տեղում Կոտայքի մարզն է (13,94%) և չորրորդ տեղում՝ Գեղարքունիքի մարզը (13,0%): Համաձայն ՀՀ ՎԿ հաշվարկների՝ 2024 թ. -ի դեկտեմբեր ամսին ՀՀ աշխատաշուկայում 16-29 տարեկան ազգաբնակչության աշխատուժի առաջարկը կազմել է 19%, իսկ մնացած 81%-ը բաժին է ընկել 30 և բարձր տարիքի ազգաբնակչությանը:[3]

Երիտասարդների մեծամասնությունը չունեն պրակտիկ փորձ,որը որ գործատուների կողմից դիտվում է հիմնական պահանջ: Երբեմն կթրական ծրագրերը չեն համապատասխանում գործատուների կողմից պահանջվող հմտություններին: Իրազեկվածության ցածր մակարդակի պատճառով մի շարք դեպքերում, հատկապես 16-23 տարեկան երիտասարդների հետ գործատուները համապատասխան պայմանագիր չեն կնքում, խախտելով նրանց իրավունքները:

ՀՀ-ում երիտասարդների աշխատանքային խնդիրները պետք է զուգակցվեն երիտասարդության զբաղվածության աջակցման պետական քաղաքականության հետ: Պետությունը պետք է առաջին հերթին աջակցի, խթանի երիտասարդների՝ աշխատաշուկայում առջնային հանդես գալը: Պետական աջակցությունը պետք է ուղղված լինի նաև այն անհատներին, որոնք համատեղում են աշխատանքը ուսումնական

[3] «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2024թ. հունվար-դեկտեմբերին» https://www.armstat.am/file/article/sv_12_24a_141.pdf

հաստատություններում սովորելու հետ՝ ճկուն գրաֆիկներ ստեղծելու համար: Աշխատաշուկա մուտք գործող երիտասարդները չպետք է թերագնահատվեն: Երիտասարդության զբաղվածության խնդիրները թե՛ պետության, թե՛ հենց երիտասարդների հիմնական խնդիրներից են: Ստեղծված իրավիճակից, առկա խնդիրներից խուսափելու համար պետք է լուծումներ փնտրել երիտասարդների, պետական կառույցների և գործատուների համատեղ ջանքերով:

«Ա. Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ,
Սյունիքի տարածաշրջանային մասնաճյուղի իրավաբան՝
Լիլիթ Հայրապետյան
06. 03. 2026թ.